«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» (ՀԳՌԿՄ) երկրորդ ծրագիր

ՀԳՌԿՄ երկրորդ ծրագրի հիմնական նպատակներն են բարելավել արոտավայրերի և անասնապահության համակարգերի արտադրողականությունն ու կայունությունը թիրախային համայնքներում և ապահովել ընտրված բարձրարժեք ագրոպարենային արժեշղթաներում արտադրվող և շուկայահանվող արտադրանքի ծավալների աճ: Ծրագրի շրջանակներում մշակված միջոցառումները նախատեսվում է իրականացնել 2015-2019 թվականների ընթացքում:

Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 42.67 մլն ԱՄՆ դոլար, որից 9.67 մլն ԱՄՆ դոլար՝ ՀԲ «Միջազգային զարգացման ընկերակցության» (IDA) վարկ, 23 մլն ԱՄՆ դոլար՝ «Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ»-ի (IBRD) փոխառություն, 2.275 մլն ԱՄՆ դոլար՝ ՀՀ կառավարության և 7.725 մլն ԱՄՆ դոլար՝ շահառուների համաֆինանսավորում: Ծրագիրն ուժի մեջ է մտել 2015թ. հունվարի 23-ին:

Ծրագիրը ներառում է հետևյալ չորս բաղադրիչները.

Բաղադրիչ 1 Համայնքի արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգեր

Բաղադրիչ 2 Արժեշղթայի զարգացում

Բաղադրիչ 3 Պետական կառույցների կարողությունների հզորացում

Բաղադրիչ 4 Ծրագրի համակարգում և կառավարում

Համայնքի արոտավայրերի և անասնապահության կառավարման համակարգեր

Բաղադրիչի հիմնական նպատակն է՝ ՀՀ 8 մարզերի (ընդգրկված չեն միայն Արարատի և Արմավիրի մարզերը) շահառու ավելի քան 100 համայնքներում աջակցել անասնապահական ուղղվածություն ունեցող ընտրված լեռնային և սահմանամերձ համայնքներին, որտեղ անասնապահությունն ապրուստի հիմնական միջոց է հանդիսանում, իսկ համայնքները մեծապես շահագրգռված են ավելացնել սեփական արոտավայրերից ստացվող արտադրանքը և իրականացնել արոտօգտագործման և կերարտադրության վրա հիմնված անասնապահական մթերքի արտադրության արդյունավետ և կայուն համակարգ, որը կառավարվում է բաղադրիչի շրջանակներում համայնքներում ստեղծված արոտօգտագործողների միավորումների կողմից:

Սահմանված նպատակին հասնելու համար անհրաժեշտ է շահառու համայնքներում նպաստել գյուղամերձ և հեռագնա դեգրադացված արոտների

բարելավմանը, արդյունավետ կառավարել արոտները, արդյունքում՝ բարձրացնել անասնապահության արդյունավետությունը (կաթնատվություն, մսատվություն), ավելացնել մսուրային շրջանի համար կուտակվող անասնակերի քանակը, ավելացնել համայնքային բյուջեի մուտքերը գանձվող արոտավճարների հաշվին, ավելացնել անասնապահական արտադրանքից ստացված գյուղական տնտեսությունների եկամուտները:

Համայնքներում ծրագրերի նախապատրաստման համար ստեղծվում են «Համայնքի արոտների կառավարման և անասնապահության զարգացման հանձնաժողովներ» բաղկացած համայնքի ղեկավարի, կոոպերատիվի նախագահի, համայնքի ավագանու և կոոպերատիվի երկուական անդամներից՝ համայնքապետի գլխավորությամբ: Հանձնաժողովների կողմից մշակվելու են «Համայնքի արոտների կառավարման և անասնապահության զարգացման պլաններ», որտեղ կարող են ներառվել ներդրումային հետևյալ տեսակները՝

- համայնքային ենթակառուցվածքների (արոտների ջրարբիացման համակարգ, արոտների ճանապարհներ, փարախ, հովվի համար կացարան) կառուցում/բարելավում. աշխատանքների իրականացման համար ծրագիրը տրամադրում է գումարի 95%, իսկ շահառու համայնքը 5%,
- գյուղատնտեսական տեխնիկայի ձեռքբերում՝ բիզնես ներդրումներ. Ծրագիրը ֆինանսավորում է գյուղատնտեսական տեխնիկայի արժեքի 80%, իսկ 20% տրամադրում է կոոպերատիվը, պայմանով, որ գյուղատնտեսական տեխնիկան ստանալուց հետո՝ 4 տարիների ընթացքում կոոպերատիվն իր հաշվին կուտակում է արժեքի 30% չափով գումար, որը կարող է օգտագործվել նոր գյուղատնտեսական տեխնիկա գնելու համար,
- կաթի հավաքման և պաղեցման կետերի, կաթի վերամշակման արտադրամասի, սպանդանոցների հիմնում. կոոպերատիվը տրամադրում է ՀՀ գործող նորմերին համապատասխանող տարածք (շենք), իսկ ծրագիրը՝ համապատասխան սարքավորումներ,
- ուսուցումներ՝ ուղղված կոոպերատիվների կայացմանը, ֆինանսական հոսքերի և արոտավայրերի արդյունավետ կառավարմանը, բնապահպանական ռիսկերի մեղմմանը և այլն.

  Ծրագիրը կատարում է նախատեսված ամբողջ ծախսերը 100%-ով:

Բաղադրիչի շահառուների ընտրության ընթացակարգերը

Բաղադրիչի շրջանակներում ընդգրկվում են այն համայնքները, որոնք անասնապահության զարգացման համար ունեն որոշակի ներուժ, ինչպես նաև ծրագրի ներքո ցուցաբերում են հաջողության հասնելու շահագրգռվածություն:

Համայնքների ընտրությունը կիրականացվի բնակչության, անասնապահությամբ զբաղվող տնտեսությունների քանակի, առկա անասնագլխաքանակի, կաթնատվության, բնական կերհանդակների ու վարելահողերի առկայության և տարածքի, համայնքային բյուջեի կատարման մակարդակի, համաֆինանսավորման համար գումարի առկայության, համայնքի համախմբվածության, սպառողական կոոպերատիվի ստեղծման պատրաստակամության վերաբերյալ տվյալների հիման վրա: Նշված չափորոշիչներին համապատասխանող բոլոր համայնքները նախնական կարգով ընդգրկվում են ընտրված համայնքների ցանկում:

Յուրաքանչյուր մարզում համայնքների նախնական ցանկը քննարկվում և հաստատվում է մարզի զարգացման հանձնաժողովի կողմից: Նախնական ցանկում ընդգրկված համայնքներում իրականացվում են հարցումներ, կազմակերպում են ժողովներ ու քննարկումներ, որոնց ընթացքում համայնքը ներկայացնում է համայնքի խնդիրները, համայնքում առկա ռեզերվները, երաշխավորում են համաֆինանսավորում, ինչպես նաև ծրագրի այլ պահանջները կատարելու պատրաստակամությունը:

Ծրագրի իրականացման նպատակով «ԳԾԻԳ» ՊՀ-ի կողմից համայնքների ցանկից ընտրվում են այն համայնքները, որոնք իրենց կողմից մշակված «Համայնքի արոտների կառավարման և անասնապահության զարգացման պլան»-ներում հիմնավորում են ներդրումների անհրաժեշտությունը և դրանց տնտեսական արդյունավետությունը:

Արժեշղթայի զարգացում

Բաղադրիչի նպատակն է աջակցություն ցուցաբերել կաթի, մսի, մրգի, բանջարեղենի, բարձրարժեք հատապտղի և մեղրի ոլորտների արտադրողներին, վերամշակողներին և արժեշղթայի այլ մասնակիցներին՝ արտադրանքի որակական ցուցանիշների, ներքին շուկայի պահանջարկի, սննդամթերքի անվտանգության պահանջների բարելավման, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքի արտահանման ծավալների ավելացման հարցերում:

Բաղադրիչի շահառուներն են

Բաղադրիչի շրջանակներում նախատեսվում է նպատակային ֆինանսական օժանդակություն տրամադրել ՀՀ օրենսդրությանը համապատասխան և պատշաճ ձևով գրանցված գյուղատնտեսության ոլորտում տնտեսվարող սուբյեկտներին, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին, արտադրական և սպառողական կոոպերատիվներին, գյուղատնտեսական մթերքի և սննդի վերամշակման ձեռնարկություններին, որոնք ներգրավված են արժեշղթաների մեջ և բավարարում են ծրագրի համապատասխանության և ընտրության չափանիշներին:

Ֆինանսավորում կտրամադրվի նոր սարքավորումների՝ արտադրության և վերամշակման, հետբերքահավաքային մշակման, պահեստավորման և պահպանման, լաբորատոր, փաթեթավորման և տեսակավորման, որակի վերահսկողության սարքավորումների, ինչպես նաև արտադրանքի որակի բարելավման և ծավալների ավելացմանն ուղղված այլ սարքավորումների և տեխնիկական հոսքագծերի ձեռքբերման նպատակով:

2015-2019 թվականների ընթացքում բաղադրիչի շրջանակներորում նախատեսվում է ֆինանսավորել 80 ծրագիր: Յուրաքանչյուր ծրագրի կարող է տրամադրվել 8.000-50.000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար՝ պայմանով, որ շահառուն կիրականացնի նույն չափի ֆինանսական ներդրում: Ծրագրի ընթացքում նախատեսվում է հատկացնել 3.5 մլն. ԱՄՆ դոլարին համարժեք նպատակային ֆինանսավորում:

Բաղադրիչի շրջանակներում չէն կարող ֆինանսավորվել այն ծախսերը, որոնք ուղղված են.

- բնապահպանական առումով վտանգավոր և շրջակա միջավայրի վրա անվերականգնելի բացասական ազդեցություն ունեցող ակտիվների ձեռքբերմանը,
- նախքան դրամաշնորհային համաձայնագրի կնքումն իրականացվող որևէ ձեռքբերմանը,
- շինարարական աշխատանքների իրականացմանը,
- բացասական սոցիալական ազդեցության ունեցող կամ տարաբնակեցման ռիսկեր պարունակող ակտիվների ձեռքբերմանը,
- աշխատանքների վարձատրությանն ու փոխհատուցմանը
- հումքի և շրջանառու միջոցների ձեռքբերմանը,
- հարկերի և այլ բյուջետային վճարումների իրականացմանը,
- շինությունների և հողատարածքների ձեռքբերմանն ու վարձակալությանը,
- սարքավորումների վերանորոգմանը:

Նպատակային ֆինանսավորման տրամադրման ընթացակարգ

Ծրագրի իրականացման վերաբերյալ հավանական հայտատուների և շահառուների իրազեկումն իրականացնում է Արժեշղթայի քարտուղարութունը՝ իրազեկման աշխատաժողովների անցկացման միջոցով: Հանրային իրազեկումը կիրականացվի յուրաքանչյուր արժեշղթայի մասնակիցների համար առանձին:

Հատուկ ջանքեր կներդրվեն կանանց, երիտասարդներին, աղքատներին և խոցելի մյուս խմբերի ներկայացուցիչներին տեղեկատվությունը հասցնելու ուղղությամբ: Իրազեկման աշխատաժողովները իրականացվում են Երևանում՝ հատուկ այդ նպատակով վարձակալված և համապատասխանորեն կահավորված դահլիճներում: Իրազեկման աշխատաժողովների վերաբերյալ լայն հանրությանը տեղեկացվում է

զանգվածային լրատվության միջոցներով և շահագրգիռ կազմակերպությունների համացանցային կայքէջերի միջոցով:

Յուրաքանչյուր աշխատաժողովի ժամանակ մեկ կամ մի քանի սննդի արժեշղթաների մասնակիցներին քարտուղարության կողմից ներկայացվում է մրցույթի նպատակները, արժեշղթաների զարգացման գերակայությունները, ինչպես նաև ծրագրերի ընտրության մրցույթների չափորոշիչներն ու առաջնահերթությունները:

Ծրագրի բոլոր փուլերում հավակնորդների կողմից ներկայացված բիզնես-հայտերի տեխնիկական և ֆինանսական գնահատումն իրականացնելու նպատակով, գրասենյակի կողմից մրցութային հիմունքներով ընտրվում է անկախ գնահատող կազմակերպություն, որը մանրամասն ուսումնասիրում է ներկայացված բիզնես-հայտերի փաթեթները և կատարում գնահատում ըստ սահմանված չափանիշների:

Անկախ գնահատող կազմակերպության կողմից դրական եզրակացություն ստացած հայտերը ներկայացվում են «Արժեշղթայի զարգացման հանձնաժողով»-ի անդամների քննարկմանը: Անկախ գործող հանձնաժողովը պատասխանատու է բաղադրիչի ընդհանուր ընթացքի արդյունավետ իրականացման համար:

ԱՇՋ հանձնաժողովի կազմն առաջարկում է «ԳԾԻԳ» ՊՀ-ն, որը հաստատվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարի կողմից և որից հետո ԱՇՋ հանձնաժողովի վերջնական կազմը ներկայացվում է Համաշխարհային բանկին՝ ի գիտություն:

ԱՇՋ հանձնաժողովի կազմը պետք է բաղկացած լինի նվազագույնը 7 և առավելագույնը՝ 9 անդամներից, որոնց մեծամասնությունը հանդիսանում են մասնավոր և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանձնաձողովի կազմում մեկ անդամ պետք է ներկայացված լինի ՀՀ պետական որևէ գերատեսչությունից (ՀՀ կառավարության առաջարկությամբ): «ԳԾԻԳ» ՊՀ-ի աշխատակիցները հանձնաժողովի անդամ լինել չեն կարող: ԱՇՋ հանձնաժողովի նախագահն ընտրվում է ԱՇՋ հանձնաժողովի անդամների (բաց կամ փակ) քվեարկությամբ: Նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, սակայն տարին 2 անգամից ոչ պակաս:

ԱՇՋ հանձնաժողովը պատասխանատու է բաղադրիչի արդյունավետ գործունեության համար: ԱՇՋ հանձնաժողովի անդամները սահմանված չափանիշներին համապատասխան իրականացնում են ենթածրագրերի ընտրությունը բաց քվեարկության միջոցով և հաղթող ճանաչված ենթածրագրերը՝ ֆինանսավորման նպատակով ներկայացնում են «ԳԾԻԳ» ՊՀ տնօրենին:

Բաղադրիչի շրջանակներում իրականացվող ծրագրերի պոտենցիալ ազդեցություն

- Կաթի, մսի, մրգի և բանջարեղենի, հատապտղի և մեղրի արժեշղթայի բոլոր օղակներում ինքնարժեքի նվազեցում, որակի և մրցունակության բարձրացում, սննդամթերքի անվտանգության համակարգերի բարելավում, ապրանքի

փաթեթավորման և արտաքին տեսքի համապատասխանեցում միջազգային ստանդարտներին:

- Հայկական կաթնամթերքի, մասնավորապես պանրի, կարագի և կաթի փոշու արտահանման ծավալների ավելացում, ապրանքների մրցունակության բարձրացում, նոր շուկաների հայտնաբերում և դիվերսիֆիկացում:
- Արտահանման հնարավորությունների ընդլայնում:
- Որակի կառավարման համակարգերի համապատասխանեցում միջազգային ստանդարտներին, ընտրված արժեշղթաների որակի բարելավում, արտադրական ծախսերի, խոտանի կրճատում, աշխատուժի արդյունավետության բարձրացում և այլն:

Պետական կառույցների կարողությունների հզորացում

Բաղադրիչի հիմնական նպատակն է հզորացնել պետական կառույցների կարողությունները՝ բաղադրիչներ 1-ի և 2-ի շրջանակներում աջակցություն ստացող ընտրված արժեշղթաներում բիզնեսի զարգացումը խթանելու և շուկայի հասանելիությունը ապահովելու համար: Բաղադրիչի շրջանակներում իրականացվելու են հետևյալ միջոցառումները.

ա) Անասնաբուժական ծառայություններ

Համայնքներում անասնաբուժական և անասնաբուծական ծառայությունների բարելավում՝ ընդլայնելով և լրացնելով պետության կողմից իրականացվող ծրագրերը, որը իր մեջ կներառի հետևյալ միջոցառումները.

- ի լրումն ՀԳՌԿՄԾ ծրագրով վերապատրաստված 100 համայնքային անասնաբույժների, ևս մոտ 20 համայնքային անասնաբույժների մոբիլիզացում և վերապատրաստում՝ որակյալ անասնաբուժական և արհեստական սերմնավորման ծառայություններ տրամադրելու նպատակով,
- չորս անասնաբուժական սպասարկման կենտրոնների կառուցում և տեխնիկապես ապահովում: Կենտրոններն ապահովված կլինեն հանդիպումների սենյակով, գրասենյակով և դեղատնով, ինչպես նաև շարժական կլինիկաներով:

բ) Սննդամթերքի անվտանգության ապահովման ծառայություններ

- մարզային և տեղական տեսուչներին ստուգիչ սարքերի տրամադրում և նրանց վերապատրաստում՝ սննդամթերքի անվտանգության ոլորտի կառույցների կարողությունների զարգացման նպատակով,
- օժանդակություն «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության»-ը և վերջինիս լաբորատորիաների տեխնիկական վերազինում,
- Լրացուցիչ գործիքների տրամադրում ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Անասնաբուժասանիտարիայի, սննդամթերքի անվտանգության և

բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ին պատվաստումների ծրագրերի համար:

գ) Ֆերմերներին և ֆերմերային տնտեսություններին բանջարեղենի տեղական սորտերի բարձրորակ սերմերով և սածիլներով ապահովում

Աջակցություն ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն»-ին բարձրորակ սերմերի ու սածիլների արտադրության ծավալների ավելացմանը:

դ) Ֆերմերային տնտեսություններին հողի մակրոէլեմենտների, թթվայնության և հումուսի քանակության հարցերով լիարժեք ուսումնասիրություն և խորհրդատվության տրամադրում

Աջակցություն ՀՀ գյուղատնտեսության նախարարության «Ագրոքիմիական ծառայության» կարողությունների հզորացմանը:

Ծրագրի վերաբերյալ առավել մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ ՀՀ ԳՆ Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակից՝ հեռ. (+37410) 297 301: